ՎԱԽՏԱՆԳ ՈՐԴԻ ՈՒՄԵԿԱՑ
ԵՒ ՆՈՐԱ ՏՈՀՄԸ

Ա.

Էջմիածնի (այժմ պետական) մատենադարանի N 215/155 ձեռագիրը, ի միջի այլոց, ունի մի շատ հետաքրքրական մանրանկար. իշխանական զգեստով մի պատանի նստած է բարձրաթիկունք աթոռի վերայ, որի կողքին մակագրուած է. «Զբարի անուն և զԱվ. մեծացեալ զմեծ պատրոնն զՎախտանգն յիշեցէք ի տր.։ Նաև զրազմամեղ զծողս և զծնողն իմ զՍարգիս և զԹագուհի, և ած. զձեզ յիշէ» (պատկ. 1)։

սկսուածքով, վերջից թերթեր պակուած լինելու պատճառով. հաւանօրէն ամբողջութիւնը առաքելական թղթերի ժողոված էր, գուցէ և ամբողջ առաքելական թղթերի, Յայտնութեան հետ, որի համար ենթադրութեան հիմքեր ունինք, ինչպէս կը տեսնենք։ Այժմ միայն 130 թերթից է բաղկացած։

Զարդարուած է մանրանկարներով, սկսուածքի և լուսանցքի զարդերով, մանրանկարչական տառերով, որ կիլիկեան

Պատկեր 1

Ձեռագիրը փոքրադիր է՝ 15 × 12 սմ. մեծութեամբ և 3 սմ. հաստութեամբ, կաշէպատ հասարակ կազմով, թուղթ, աջից դէպի ձախ թեքուած բոլորգրով, երկսիւն՝ իւրաքանչիւրը 10,8 × 3 սմ.։ Սկզբում ունի երկու թերթ մագաղաթ պահպանակ՝ լատիներէն գրչութեամբ։ Բովանդակութիւնը Պողոսի թղթերն են՝ յառաջաբանով. կիսատ է մնում Փիլեմոնի

ոճին մօտենալով հանդերձ, պահել է աբեղեան Հայաստանի արուեստի բնոյթն ու առանձնայատկութիւնները, մանաւանդ ձևերի ու մոտիւների կողմից. մանրանկարչական տառերը թղթերի սկզբում կազմուած են բուսական և ուլթաձևերի մոտիւներով, գծերի հանդիպման տեղում գնդակներով. գործադրուած է փոշոսկի կամ խեցոսկի և ոչ երբեք թերթոսկի։